



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

28 մարտի 2011թ. թիվ 84-Ա

**“ԼՈՒՈՒՄԱՐԶԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ” ՓԲԸ-Ի  
ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ  
ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2006թ. հոկտեմբերի 16-ի “Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթային հանձնաժողովի և ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգերը հաստատելու մասին” թիվ 284-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8-րդ կետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 11-ի “Լոռու մարզի առողջապահական ընկերությունների տնօրենների ընտրության (նշանակման) մրցույթային հանձնաժողովի և ատեստավորման հանձնաժողովի անդամության թեկնածուների ցուցակը հաստատելու մասին” թիվ 28-Ա որոշման հիման վրա համակարգչում նախօրոք գետեղված և համակարգչի կողմից պատահական ընտրված 5 թեկնածուների ցուցակը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող “Լոռու մարզային արյան փոխներարկման կայան” ՓԲԸ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցույթային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անդամներից հանձնաժողովի նախագահ նշանակել Արսեն Դարբինյանին, հանձնաժողովի քարտուղար՝ Վալերի Զաղինյանին:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

Ա.ԳՈՉԱՐՅԱՆ

2011թ. մարտի 28  
ք.Վանաձոր